ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Եվրամիությունը հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհան



ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒՀԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (2021-2022ԹԹ.)

ՀԱՅԱՍՏԱՆ

Ի՞ՆՉ Է ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒՀԱՆԸ

ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհանն ապահովում է պահանջարկից բխող օգնություն Արևելյան գործընկերության երկրների կառավարություններին և ԵՄ պատվիրակություններին՝ քաղաքականության փաստաթղթերում գենդերային մեյնսթրիմինգի խթանման և տղամարդկանց ու կանանց համար իրական արդյունքներով բարեփոխումների հասնելու համար:

1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գենդերային մեյնսթրիմինգ կառավարական փաստաթղթերում և օրենքի նախագծերում.

- ՀՀ Տնտեսական արձագանքման ծրագիր և գործողությունների պլան
- Մասնագիտական կրթության և վերապատրաստման դասընթացների մասին օրենք
- Ուսուցիչների մասնագիտական կրթության նոր ծրագիր

Գենդերային մեյնսթրիմինգ ԵՄ պատվիրակության փաստաթղթերում.

- ՀՀ 2021-2027թթ. Բազմամյա ինդիկատիվ ծրագիր
- Երկրի մակարդակով իրականացման ծրագիր (CLIP) 2021-2025թթ.
- Հայաստանում ԵՄ պատվիրակության՝ կրթության վերաբերյալ գործողությունների ծրագիր

Ռազմավարությունների ու քաղաքականությունների ձևավորման աջակցություն.

- Աջակցություն նոր Գենդերային ռազմավարություն և գործողությունների պլան 2024-2028-ի կազմմանը

2. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կին և տղամարդ հանրային ծառայողների՝ գենդերային մեյնսթրիմինգի կարողություններն ու հմտությունները զարգացնող դասընթացներ/աշխատարաններ/սեմինարներ.

- Պետական սոցիալական աշխատողների համար երեք առցանց և առկա դասընթաց «գենդերազգայուն սոցիալական աշխատանքի» վերաբերյալ՝ 2022թ. մայիսի 19, հուլիսի 15 և նոյեմբերի 13 (138 մասնակից՝ 113 կին և 25 տղամարդ)
- Պետական սոցիալական աշխատողների համար երեք առցանց և առկա դասընթացներ «ընտանեկան բռնության դեպքերի հետ սոցիալական աշխատանք» թեմայով՝ 2022թ. մայիսի 23-25, հուլիսի 21-22 և նոյեմբերի 15-18 (միևնույն 138 մասնակիցների համար՝ 113 կին և 25 տղամարդ)
- «Ընտանեկան բռնության դեպքերի ճգնաժամային միջամտության կազմակերպում» թեմայով առկա դասընթաց Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցների համար՝ 2022թ. հուլիսի 8 (17 մասնակից՝ 13 կին և 4 տղամարդ)

Հայաստանում ԵՄ պատվիրակության համար վերապատրաստման դասընթացներ.

- Հայաստանում ԵՄ պատվիրակության, ՀՀ կառավարության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների համար գենդերային հավասարության և մեյնսթրիմինգի թեմայով առկա դասընթաց՝ 2022թ. հունիսի 1-2 (20 մասնակից՝ 3 տղամարդ և 17 կին)

Հանրային մասնակցության և խորհրդակցությունների աշխատանքային խմբերի կազմակերպման աջակցություն.

- «Երկրի գենդերային բնութագիր՝ Հայաստան» փաստաթղթի ներկայացում և «Երկրի մակարդակով իրականացման ծրագրի» քննարկում ՀՀ կառավարության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, Հայաստանում ԵՄ պատվիրակության և ԵՄ անդամ պետությունների հետ
- «Գենդերային գործողությունների պլան-Հայաստան մեկնարկային միջոցառում»՝ գործողությունների

Փաստաթուղթը մշակվել է ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհան ծրագրի շրջանակներում՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ և NIRAS-ի կողմից: Դրա բովանդակությունը պատկանում է NIRAS-ին և կարող է չարտացոլել Եվրամիության տեսակետները:

NIRAS
իրականացվում է niras-ի կողմից

ծրագրի և CLIP-ի մեկնարկի նշանավորմամբ՝ 2022թ. հունիսի 20 (100+ մասնակից)
- «Կանանց զորեղացում և սոցիալական աշխատանք» թեմայով միջոցառում՝ 2022թ. նոյեմբերի 4 (150+ մասնակից)

Ուսումնական այց.
- ՀՀ կառավարության ներկայացուցիչների համար դեպի Վրաստան այցի կազմակերպում (հունիսի 27-30 , 2022թ.)՝ սեռական, գենդերային և ընտանեկան բռնության դեմ պայքարի փորձի փոխանակման նպատակով: Ուսումնական այցը ներառել է հանդիպումներ Վրաստանի հետևյալ հասարակական կառույցների հետ՝ Գենդերային հավասարության, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության միջգերատեսչական հանձնաժողով, Վրաստանի խորհրդարանի գենդերային հավասարության խորհուրդ, Վրաստանի հանրային պաշտպանի գրասենյակ, Ազգային վիճակագրության գրասենյակ (GEOSTAT), Ներքին գործերի, Ներքին տեղահանված անձանց, Աշխատանքի, Առողջապահության և սոցիալական հարցերի նախարարություններ և Թրաֆիքինգի զոհերի պետական խնամքի և աջակցության գործակալություն (18 մասնակից՝ 17 կին և 1 մարդ)

3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՎՐԱ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԻՄՔ

Հայաստանի վերաբերյալ տեղեկատվական նյութեր՝ ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության բարեփոխումների պատուհանի կողմից մշակված

- ՀՀ «Երկրի գենդերային բնութագիր» (2021թ.)
- Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակի գենդերային հավասարության հաղորդակցման ծրագիր չորս թեմատիկ ուղղություններով՝ 1)սեռական և գենդերային բռնություն/ընտանեկան բռնություն, 2)ատելության խոսքի կանխարգելում կին իրավապաշտպանների և առաջնորդների նկատմամբ, 3)գենդերային հավասարություն և կանանց զորեղացում՝ թիրախավորելով հանրային հատվածի խնդիրները, այդ թվում՝ կանանց քաղաքական մասնակցության և ներկայացվածության և
- կանանց տնտեսական հզորացման և զբաղվածության խնդիրները (ներառյալ մայրության արձակուրդից վերադառնալու խնդիրները, մինչև երեք տարեկան երեխա ունեցող աշխատողների համար ճկուն մեխանիզմների բացակայությունը և այլն)
- ՄԻՊ գրասենյակի համար Հայաստանում սեռական բռնության հիմնախնդրի վերաբերյալ հաղորդակցման արշավ
- ՄԻՊ գրասենյակի համար աշխատավայրում սեռական ոտնձգությունների վերաբերյալ ուսումնասիրություն (2022թ.)
- Հայաստանում կանանց և էներգետիկայի վերաբերյալ հետազոտություն (ավարտվելու է 2023թ.)
- Հայաստանում կանանց խոցելի խմբերի համար դեպքերի վարման համակարգի գնահատման և մշակման ուղեցույց

Բարեփոխումների պատուհանի հավասարության գրադարանում ներառված՝ Հայաստանի վերաբերյալ հրապարակումների ոլորտները.
- Գենդերային կարծրատիպերը և հասարակության վերաբերմունքը գենդերային դերերին
- Կանանց ներկայացվածությունը մեդիայում
- Կանանց քաղաքական մասնակցություն և առաջնորդություն
- Կանանց ձեռներեցություն
- Զբաղվածության և չվճարվող խնամքի աշխատանքի գենդերային ասպեկտները
- Վարձատրության գենդերային խզվածք
- Կանաչ տնտեսության գենդերային գնահատում
- Գենդերային բռնությունը Հայաստանում
- Հայաստանում կանանց և աղջիկների հասանելիությունը արդարադատությանը
- COVID-19-ի ազդեցությունը Հայաստանում ընտանեկան բռնության վրա

ՄԵՐ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՍՔԵՐՈՎ

"«[Դասընթացավարներն] այնքան լավն են, որ թեև առցանց էր, բայց դասերը վարում էին սիրով և նվիրումով: Ինձ համար այնքան կարևոր է, որ նրանք ոչ միայն տալիս են տեսական գիտելիքներ, այլ նաև փորձում են մեզ ներգրավել դասի գործընթացում և այն ավելի օգտակար դարձնել պրակտիկայի միջոցով [...] Առաջ, երբ ես մտնում էի ընտանիքներ, որտեղ բռնություն կար, չգիտեի ինչ անել: Բայց հիմա ավելի վստահ եմ, թե ինչ ասեմ և ինչպես մոտենամ իրավիճակին: Ավելին, երբ տարբեր մասնագետներ կիսվում են իրենց ունեցած դեպքերի մանրամասներով, և մենք քննարկում ենք ամբողջ խմբի հետ, իսկ դասընթացավարները մեզ ուղղորդում են և անհրաժեշտության դեպքում ուղղում, մեծ արդյունքների ենք հասնում»:

– Սոցիալական աշխատող (տղամարդ)՝ Հայաստանի միասնական սոցիալական ծառայությունից

«Պրակտիկայում կօգտագործեմ [դասընթացից ստացած] գիտելիքները: Ինձ շատ դուր եկավ, որ [դասընթացավարները] մեզ տվեցին թե՛ թեմատիկ նյութեր, թե՛ իրենց համապարփակ սահիկաշարերը: Շատ հաճելի դասընթաց էր ինձ համար: Շնորհակալություն, որ նման դասընթացի մասնակցելու հնարավորություն տվեցիք:

– Սոցիալական աշխատող (կին)՝ Հայաստանի միասնական սոցիալական ծառայությունից

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

- ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության բարեփոխումների ծրագրի էջ
- Գենդերային հավասարության գրադարան
- ԵՄ Արևելյան գործընկերություն. Հայաստան (անգլերեն)
- ԵՄ Արևելյան գործընկերություն. Հայաստան (հայերեն)

ԱՅՑԵԼԻՐ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ